

**2018 թվականի պրակտիկայի բաժնի կողմից կատարված աշխատանքների մասին
հաշվետվություն**

2018 թվականի ընթացքում արտադրական և ուսումնական պրակտիկա է անցկացրել ՎՊՀ-ի բակալավրի ծրագրով սովորող շուրջ 530 ուսանող (առկա 270, հեռ. 260) 2018-2019թ.թ. ուստարվա առաջին կիսամյակում: Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է 2018-2019թ.թ. ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված պրակտիկաները:

2018 թվականի պրակտիկաներ	Բակալավրիատ							
	Ուսումնական պրակտիկա		Արտադրական պրակտիկա					
	Մասնագիտություն	Ուսանողների թիվը	Մասնագիտություն	Ուսանողների թիվը	Առկա	Հեռակա	Կրթական կենտրոն	Անհատական
Առաջին կիսամյակ 2018-19 ուստարի	Դեղ.քիմիա, առ. Դեղ.քիմիա, հեռ.	15 14	14 առկա 13 հեռ.	501	255	246	14 առկա 42 հեռ.	1 առկա 17 հեռ.

Կիսամյակի ընթացքում պրակտիկայի բաժնի աշխատակիցներն իրականացրել են այդ պրակտիկաների կազմակերպման աշխատանքներ: Մասնավորապես.

- Կազմակերպվել է արտադրական պրակտիկաները, որին մասնակցել է շուրջ 530 ուսանող: Այդ նպատակով կազմվել է նշված ժամանակահատվածների արտադրական պրակտիկայի կազմակերպումը համակարգող փաստաթղթերը՝ «Կիսամյակում արտադրական պրակտիկայի անցկացման ժամանակացույց»-ը, «Կիսամյակի արտադրական պրակտիկաների կազմակերպման համապարփակ տեղեկատու»-ն, «Կիսամյակում արտադրական պրակտիկայի կազմակերպման տեղեկատու ըստ ֆակուլտետների»: Այդ փաստաթղթերը հաստատվել են ղեկավարության կողմից և տրամադրվել ղեկնաստներին և համապատասխան ամբիոններին:
- Պայմանագիր է կնքվել պրակտիկայի անցկացման շուրջ 35 հաստատությունների հետ:

- Կազմակերպվել է բակալավրիատի պրակտիկայի օրագրերի և հաճախման մատյանների տպագրությունը:
- Ուսումնասիրվել է պրակտիկայի նախապատրաստական փաստաթղթերը՝ պրակտիկայի զեկուցագրերը, նկատված թերությունները շտկվել են:
- Կիսամյակի ընթացքում ըստ ուսանողների քանակի օրագիր է լրացվել և տրամադրվել դեկանատներին:
- Լրացվել և բազային կազմակերպություններին բաշխվել է հաճախման մատյանները, հրամանի քաղվածքները:
- Պրակտիկայի բաժնի աշխատակիցները մասնակցել են բոլոր մասնագիտությունների գծով արտադրական պրակտիկաների կոնֆերանսներին:
- Վերահսկվել է բազային կազմակերպություններում արտադրական պրակտիկայի ընթացքը, ուսանողների հաճախումը և արդյունքները ներկայացվել են ղեկավարությանը:
- Կատարել ենք դասալսումներ տարբեր մասնագիտությունների գծով, առկա և հեռակա բաժիններում:
- Պրակտիկայի բաժնի աշխատակիցները մասնակցել են ուսանողների կողմից կազմակերպած միջոցառումներին:
- Հավաքվել է ուսումնական պրակտիկաների օրացույցային պլանները և դրանց հիման վրա վերահսկվել է պրակտիկաների անցկացումը:
- Խորհրդատվություն է մատուցվել ուսանողներին, պրակտիկայի ղեկավարներին:
- Ուսումնասիրվել է պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը, վերացվել են դրանց թերությունները, բացթողումները:
- Ստուգվել է պրակտիկայի ղեկավարների ժամավճարային թերթիկները:
- Կազմակերպվել է պրակտիկայի անցկացման հաստատությունների վճարման աշխատանքները:
- Պրակտիկայի բաժնի աշխատակիցները մասնակցել առկա բաժնի 8 և հեռակա բաժնի 15 պրակտիկայի պաշտպանություններին (առկա բաժնի մյուս 7 պրակտիկաների պաշտպանությունները դեռևս չի կայացել)
- Կատարել ենք ծրագրերի մոնիթորինգ և անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվություն ամբիոնների հետ:
- Կազմակերպել ենք 2018-19 ուստարվա երկրորդ կիսամյակի արտադրական և գիտամանկավարժական պրակտիկաներին անհրաժեշտ 485 օրագրերի տպագրությունը:
- Կատարել ենք վերադասի կողմից տրված այլ հանձնարարություններ:

Պրակտիկայի բաժնի կողմից կատարվել է պրակտիկայի ծրագրերի մոնիթորինգ, որի ընթացքում ուսումնասիրվել են բուհի կողմից թողարկվող մասնագիտությունների արտադրական և ուսումնական պրակտիկաների ծրագրերը:

Մոնիթորինգի համար հիմք է հանդիսացել պրակտիկայի բաժնի կողմից մշակված արտադրական, ուսումնական պրակտիկայի ծրագրի կառուցվածքի օրինակելի ձևաչափը:

Ուսումնասիրությունների արդյունքում նկատվել են որոշակի թերություններ, այդ թերությունները վերացնելու նպատակով պրակտիկայի ծրագրերը ներկայացնող ամբիոններին ևս մեկ անգամ տրվել է օրինակելի ձևաչափը՝ ծրագրերը վերջնական տեսքի բերելու նպատակով:

Ներկա պահին աշխատանքներ են տարվում 2018 – 2019թ.թ. ուս. տարվա առկա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի և հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի արտադրական և գիտամանկավարժական պրակտիկաների անցկացման ժամանակացույցերի, ինչպես նաև դրանց կազմակերպման համապարփակ տեղեկատուի մշակման վրա: Ավարտելուց հետո կներկայացնենք հաստատման:

Պրակտիկայի բաժինը մշտապես համագործակցում է կրթական կետրոնների մեթոդիստների հետ, վերահսկում է պրակտիկա անցկացնող ուսանողների հաճախումները և կատարած աշխատանքները:

Պրակտիկայի բաժնի կողմից համալսարանի առկա ուս. համակարգի թվով 8 բաժիններում կատարել ենք սոց հարցումներ՝ պրակտիկայի որակի ուսումնասիրություն արդյունավետության բարելավման նպատակով: Սոց հարցմանը մասնակցել է 132 ուսանող: Մնացած 8 բաժիններում սոց հարցումը կկատարենք պրակտիկայի պաշտպանությունների ժամանակ:

Հեռակա ուս. համակարգի սոց հարցումը նախատեսվում է իրականացնել 2018 – 2019թ.թ. ուստարվա առաջին կիսամյակում 5-րդ կուրսի ուսանողների շրջանում: Հարցման արդյունքները ամփոփ հաշվետվության տեսքով կներկայացվի ուսումնամեթոդական վարչություն:

Պրակտիկայի բաժնի ղեկավար՝

Լ. Աբովյան
15.12.18թ.